# ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-սանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

*Ուխտի Ս. Էջմիածնի.*

*Ի նախնեաց անտի սուրբ, առաքելական եկեղեցիս Հայաստանեայց գնեա եղեալ կանոնաց, սահմանելոց յազգային ժողովոց, յառաքելաշաւիղ Հայրապետաց և հարանց սրբոց, առաջնորդէր բանաւոր հօտին իւրոյ ի բարի վարս և յանարատ կեանս ըստ հոգեորին և ըստ մարմնաւորին, զառանձին իմն փայլ ունելով զամբծութենէ ընտանեկան բարուց առն և կնոջ, զուգելոց ըստ Տէրունական Բանին ընդ միմեանս անքակտելի յօդմամբ ս. Խորհրդոյն պսակի։ Եւ ի սմանէ իսկ սկիզբն առաքինութեանց, յորս պարծեցան նախնիք մեր դարուց ի դարս, զամուսնացելոց զմիաբան սիրոյն սանձք և զանարատութենէ առագաստին հարսանութեան, զյաճախմանէ որդեծնութեանն և զզաւակացն քաջառողջութենէ, զանբասիր կենաց նոցա առ ընտանիս և համազգիս իւրեանց։ Ո՞չ ապաքէն և ի սմին հաստեալ արմատոց զօրութեան ազգիս և բարեպաշտութեան հոգւոր որդւոց Մերոց, սնուցելոց և տածելոց ի սմին իսկ յաղբերէ արդար մատակարարութեան կանոնեալ կարգաց և օրինաց ամուսնականաց։*

*Այլ զի՞նչ տեսանեմք արդեւք ի նորումս ժամանակի։ Զի հոլովմունք ժամանակաց, փոփոխութիւնք դարուց և բարուց, յեղյեղումն կարգաց, կարծեաց և խելամտութեան մարդկան ընդ ստուերաւ արկեալ զհնութիւն աւանդական կարգաց հաստելոց ընդ մէջ առն և կնոջ, սկիզբն եդին նորանոր սովորութեանց, զորս անյարիրս համարեմք քրիստոնէական կրօնիցն և միան-*

գամայն օտարս ընթացից և ուղւոց, զորս ազգայինն ւանդ առաջի առնէ մեզ. Կանայք յարանց լքեալք՝ վտարին յառագաստէ հարսնութեան հպմամբ չարին և որք ի կանանց պատրեալք խարխափին ի վարս անզգոնելի, քամահեալ զորրութեամբ հայրենի յարկացն, ոչ ունելով ևս փոյթ զումեքէ՝ ոչ զզաւակացն և ոչ զծնողական պարտուցն իւրեանց. Յայսմանէ և կործանումն մեծ ընտանեկան վարուց և բարուց և նուազումն բեղմնաւորութեան սեռին և աճման ազգիս. Ոչ սակաւք և դիպուածք, զի ամուսնացեալք կամակորութեամբ իմն՝ պատճառանս յերիւրեալ և յանցանս զմիմեամբք բարբառեալ, ոչ ևս ունեն ժոյժ կեալ ընդ միմեանս և ի խնդիր լինին եղծանել զկապանս ամուսնութեան՝ է որ չհանդուրժեալ պատուհասից եկելոց ի վերայ՝ եթէ ցաւք իցեն կամ նեղութիւնք, եթէ թշուառութիւնք կամ աղքատութիւնք և է որ պատրեալ ի չարէն զհետ եղեալ կամաց իւրոց և թելադրութեան ոսոխին. Ընդ այսն յոյժ կարեւոր վարկանիմք յուշ առնել, զի հոգևոր Ատեանք մեր, յորս քննին և ի յայտ ածին ամենայն հանգամանք և պատճառք ի դէպս լուծման առն և կնոջ ի միմեանց և ի կապիցն օրինական ամուսնութեան, միանգամայն զանց արարեալ զկանոնօքն հնոց և ոչ ունելով ընդ ձեռամբ կանոնս նորս և աներկբայս և ոչ ուղեցոյցս՝ եթէ յոր դէպս իրաւունք իցեն բաժանել զամուսինս ի միմեանց և ո՞յր սակս ի բաց մերժել զխնդիր նոցա, կամ որո՞ւմ արդեօք ի նոցանէ մարթ իցէ արտօնել մտանել ի նոր ամուսնութիւն և որում ոչ, լուծանեն անխտրաբար զայր ի կնոջէ և կամ զկին յառնէ իւրմէ, դատապարտեալ զմինն ի կորուստ և արդարացուցեալ զմիւսն՝ յիրաւի կամ յանիրաւի, յորմէ և ուրեք ուրեք ոչ սակաւ ցաւումն և սրտմտութիւն ի ժողովրդեան մերում առ հոգևոր դատաւորս, յորմէ և գժտութիւնք և պառակտումն հօտին՝ առ ի խափան լինել իրաւանցն, որք ի ձեռս հոգևոր Ատենից մերոց.

Արդ իղձք Մեր բղձացեալք, զի մի յապաղեսցուք այլ ևս զամենայն ամուսնալուծական դէպս, խնդիրս և զհարցմունս

ընդ խիստ և օրինական բացայայտ կանոնովք արկանել, զի մի ևս լինիցի զայթակղութիւն ժողովրդեան Մերում և մի ևս ծագեսցին ի դմանէ մոլորութիւնք ի դատավարութեան Հոգևոր Ատենից Մերոց, այլ ջանս ի վերայ դիցուք ի վերաշինել զկերտուած ընտանեկան կենաց հօտին Մերոյ ի վերայ հիման Սիրոյ և Միութեան ընդ մէջ առն և կնոջ՝ իբրև ընդ Քրիստոսի և ընդ Եկեղեցւոյ։ Ուստի և յանձն առնեմք Սինոդիդ և պատուիրեմք անդամոց Դորին, մինչ զձեռն ի գործ առ ի հետախուզել զամենայն գործս ամուսնալուծական, որոց յընթացս վերջին երեսնամեայ ժամանակի մտեալ ի Սինոդ և զվախճանական լուծմունս Նոցա, կարգաւորել զայնոսիկ ըստ տեսակի և ըստ որպիսութեան հանգամանաց յանցուածոց ամուսնոցն, այլ և քաղել հանել զտեղեկութիւնս՝ եթէ իւ առաջնորդեալ իցէ Սինոդն ի վարելն այդպիսեաց գործոց և որպիսիք ի Նոյն կանոնաց գործադրեալք իցեն, յոր դէպս խոտորմունք ի նախնեաց սովորութեանց եղեն, որպիսիք ցուցմունք պետական օրինաց վասն ամուսնալուծութեանց, որպիսիք կարիք և պահանջք ժամանակիս ի պատճառս ամուսնալուծական խնդրոց, զի ի վերայ հիման այսոցիկ՝ աշխատ լինիջիք ի մօտոյ մատուցանել Մեզ, զի և Մեք մարթասցուք տնօրինել զարժանն և սահմանել կանոնս անթերիս և աներկբայս, որպէսզի այսուհետև հոգևոր Ատեանք Մեր զհետ կանոնացդ երթեալ, զայնս ի կիր արկցեն՝ անխախտ և անշեղ պահպանութեամբ։ Մաղթեմք կար և զօրութիւն ամենեցունցդ առ ի կատար ածել։

Բնականին վրայ ստորագրուած.

«ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ».

Ի 26 Նոյեմբերի 1915 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՅԿԴ.
ի Հայրապետութեան Մերում Դ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 2180.